Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երկու դասվարի (15 և 20 դասաժամ), զինղեկի (1 դրույք), հայոց լեզվի և գրականության (26 դասաժամ), մաթեմատիկայի (15 դասաժամ), տեխնոլոգիայի տղաների խումբ (4 դասաժամ) և աղջիկների խումբ (4 դասաժամ), գերմաներենի (8 դասաժամ), կերպարվեստի (2 դասաժամ), երգ և երաժշտության (2 դասաժամ), ռուսաց լեզվի (6 դասաժամ), ֆիզիկայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),

- 1 լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են

թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. հոկտեմբերի 4-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Լոռու մարզ, գ. Մեծավան, Չարենցի 27:

Տեղեկությունների համար զանգահարել (098)14-25-15 հեռախոսահամարով: